

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բազմազան են մտավոր հաղորդակցման ձևերն ու եղանակները. զրույց, երկխոսություն, քննարկում, վիճաբանություն: Նրանք ունեն իրենց առանձնահատկությունները, միմյանցից տարբերվում են կազմակերպման ձևերով ու եղանակներով, գործառնման իրենց բնագավառներով: Լինելով միևնույն երևույթի՝ մտավոր հաղորդակցման տարբեր դրսևորումները, նրանք, իհարկե, ունեն նաև բազմաթիվ էական ընդհանրություններ ու զուգահեռներ: Ի վերջո, դրանք բոլորն էլ սոցիալական հարաբերությունների արդյունք են և հնարավոր են միայն որոշակի սոցիալական պայմանների դեպքում: Մըտավոր հաղորդակցման բոլոր հնարավոր ձևերը մերձեցնող մի գիծ էլ կա, թեև: Դա նրանց փաստարկվածությունն է¹: Եթե, իհարկե, ինչպես նկատում է ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը, հաղորդակցման այդ ձևերը ճիշտ են կազմակերպված, խեղաթյուրված չեն, նպատակին հասնում են մտավոր աշխարհում ընդունելի եղանակների ու հնարքների միջոցով²:

Ներկա հետազոտության շրջանակներում կդիտարկվեն վեճի և փաստարկման մի շարք առանձնահատկություններ, կանդադառնանք փաստարկման և վիճաբանության՝ որպես մտավոր հաղորդակցման առավել ակտիվ եղանակի, փոխհարաբերությունների խնդրին:

Հաղորդակցման, երկխոսության և հատկապես վեճի ու վիճաբանության հիմնահարցերի ուսումնասիրությունը մասնագիտական գրականության մեջ, սովորաբար, այս կամ այն կերպ առնչվում է փաստարկման խնդիրների ուստմնասիրման հետ, և ընդհակառակը, փաստարկման երևույթի ուսումնասիրությունը, տրամաբանորեն զարգանալով, հանգեցնում է երկխոսության, վիճաբանության հիմնահարցերի հետազոտությանը: Հաճախ էլ հանդիպում ենք միևնույն հետազոտության շրջանակներում այդ երկու պրոբլեմների միավորման հետ: Դա պայմանավորված է վիճաբանության և փաստարկման, որպես մտավոր հաղորդակցման ձևերի, փոխադարձ կապով և միահյուսվածությամբ:

Գոյաբանական այդ փոխադարձ կապն ու միասնությունը վեր է ածվում իմացաբանականի, երբ արտացոլվում է կենդանի իմացության մեջ, գիտական գիտելիքի բնագավառում: Ակնհայտ է ազգակցական կապը ապացուցման, փաստարկման և վիճաբանության տեսությունների միջև: Նրանք փոխադարձաբար լրացնում ու հարստացնում են միմյանց նաև իմացաբանական, ճանաչողական ու տրամաբանական առումներով:

¹ Տե՛ս Գ. Ա. Брутян, Очерк теории аргументации. Ереван, 1992, էջ 9:

² Տե՛ս նույն տեղը:

Ապացուցման տրամաբանական ուսմունքը կազմում է փաստարկման տեսության միջուկը, նրա առանցքային օղակը: Փաստարկման մասին ուսմունքն էլ իր հերթին հանդիսանում է վիճաբանության տեսության միջուկը, նրա հիմնական բաղադրատարրը: Գոյություն ունի նաև այն տեսակետը, որ վիճաբանության և փաստարկման տեսությունները ապացուցման տրամաբանական ուսմունքի յուրատեսակ ընդլայնումներն են, առաջ են գալիս նրա ընդարձակման արդյունքում³:

Վիճաբանության մեջ փաստարկման տեղի ու դերի, վիճաբանության ու փաստարկման փոխհարաբերության հարցերի քննարկումը շատ կարևոր ու օգտակար է ճանաչողական առումով: Այն հնարավորություն է տալիս ընդլայնել ու խորացնել գիտելիքներն ինչպես փաստարկման, այնպես էլ վեճի ու վիճաբանության տեսության և պրակտիկայի բնագավառում՝ ավելի ամբողջական ու լիակատար դարձնելով մեր պատկերացումներն այդ երևույթների մասին:

Ընդունված կոնցեպցիայի համաձայն, փաստարկումը «կշռադատության այնպիսի եղանակ է, որի ընթացքում առաջադրվում է որևիցե դրույթ՝ որպես ապացուցման թեզիս, քննարկվում են նրա ճշմարտության օգտին բերված փաստարկներն ու հնարավոր հակափաստարկները, արժեքավորվում են ինչպես ապացուցման, այնպես էլ հերքման թեզիսն ու հիմքերը: Հերքվում է հակաթեզիսը, այսինքն՝ ընդդիմախոսի թեզիսը, ապացուցվում է թեզիսը: Ինչպես ապացուցողի, այնպես էլ ընդդիմախոսների մոտ համոզմունք է ստեղծվում թեզիսի ճշմարիտ և հակաթեզիսի սխալ լինելու վերաբերյալ, հիմնավորվում է թեզիսի ընդունման նպատակահարմարությունը՝ ակտիվ կենսադիրքորոշման մշակման և ապացուցվող դրույթից բխող համապատասխան ծրագրերի, գործողությունների իրագործման նպատակով»⁴:

Եթե վեճն ամենաընդհանուր ձևով բնութագրելու լինենք իբրև մտավոր պայքար, որևիցե խնդրի կամ հարցի շուրջ տարբեր տեսակետների ու կարծիքների հակամարտություն, ապա հենց առաջին հայացքից միանգամայն ակնառու է դառնում նրա և փաստարկման սերտ շաղկապվածությունն ու միահյուսվածությունը: Վեճի ընթացքում հակադիր կողմերից յուրաքանչյուրը ձգտում է փաստարկներ բերել հօգուտ իր թեզիսի ճշմարտության, ապացուցել ու հիմնավորել այն, հերքել մյուս կողմի պաշտպանած հակաթեզիսը, համոզել նրան իր թեզիսի ճշմարտացիության և նրա ընդունման նպատակահարմարության մեջ: Այլ կերպ ասած՝ փաստարկել:

Փաստարկումն ու վիճաբանությունը գոյություն ունեն մեկը մյուսի մեջ, ենթադրում են միմյանց: Մի կողմից վիճաբանությունը բաղկացած է փաստարկողական և այդ փաստարկումն արժեքավորող կամ գնահատող մենախոսություններից: Մյուս կողմից՝ փաստարկման անգամ պարզագույն ակտն իր գնահատման արտահայտության հետ կարող է դիտարկվել որպես «միևնի բրկխոսություն» կամ «միևնի վիճաբանություն»⁵:

Փաստարկման ականավոր տեսաբաններից մեկը՝ Խ. Պերելմանը, անդրադառնալով փաստարկման և ավանդական տրամաբանության փոխհարաբերության հարցերին, նշում է, թե փաստարկումն, ի տարբերություն ապա-

³ Տե՛ս **В. Б. Родос**. О правилах доказательств, аргументации и полемики (В кн.: Философские проблемы аргументации.—Под ред. акад. Г. А. Брутяна и проф. Н. С. Нарского), Ереван, 1986, էջ 304:

⁴ **Г. А. Брутян**, Аргументация. Ереван, 1984, էջ 7: Տե՛ս նաև նույնի, Очерк теории аргументации, с. 15.

⁵ **А. П. Алексеев**, Аргументация, Познание. Общение. М., 1991, с. 132:

ցուցման, ենթադրում է մտքերի պայքար⁶; Իհարկե, այլ հարց է ապացուցման և փաստարկման պերելմանական տարբերակումը և նրանց հակադրությունը⁷, սակայն ճշմարիտն այն է, որ փաստարկումն արդեն ինքնին ենթադրում է մտքերի փոխանակություն, երկխոսություն⁸: Փաստարկման գործընթացն, ըստ էության, երկխոսություն է, զրույց, վիճաբանություն՝ բացահայտ (երբ ընդդիմախոսը իրականում առկա է) կամ ոչ բացահայտ (երբ ընդդիմախոսը միայն ենթադրվում է)⁹:

Ակադեմիկոս Բրուտյանն իր «Փաստարկման տեսության ակնարկում» ընդգծում է, որ փաստարկումը երկկողմանի գործընթաց է, և այդ երկկողմանիությունն ի հայտ է գալիս այն բանում, որ յուրաքանչյուր փաստարկող ունի իր հասցեատերը¹⁰: Վերջինս կարող է և ֆիզիկապես ներկա չլինել, ինչը, սակայն, չի նշանակում առհասարակ նրա բացակայություն: Մարդը կարող է փաստարկել նաև առանց հասցեատիրոջ անմիջական ներկայության: Դա ավելի ակնառու է փաստարկման գրավոր շարադրման ժամանակ¹¹: Հասցեատերը, լինի նա իրականում գոյություն ունեցող անձնավորություն, երևակայական հակառակորդ թե մի երկրորդ «ես», ենթադրվում է բոլոր դեպքերում:

Սակայն պետք է նկատել, որ հակառակորդի (կամ հասցեատիրոջ) փաստացի առկայության դեպքում փաստարկողի «գործը հեշտանում է», մեծանում է նաև փաստարկման գործընթացի արդյունավետությունը: Զուր չէ, որ վիճաբանությունը համարվում է փաստարկողական գործունեության կազմակերպման խրախուսելի ձև¹²: Վեճի ժամանակ տեղի է ունենում, այսպես ասած, աշխատանքի բաժանում: Ինչպես գրում է լեհ տրամաբան Քադեուշ Կոտարբինսկին. «Դու կփորձես պաշտպանել քո վարկածը, ես՝ իմը, և կտեսնենք, թե դրանից ինչ դուրս կգա: Ես կփորձեմ հերքել քո դրույթները, իսկ դու՝ իմ: Եկ մեր հետազոտության մեջ հերքենք ամեն ինչ, քանզի միայն այդ ձևով է հնարավոր հայտնաբերել այն, ինչը հերքման ենթակա չէ: Այն, ինչը կդիմանա փորձությանը, կլինի համատեղ գտած ճշմարտությունը: Թող որ այն էլ լինի մեր վեճի միակ հաղթողը»¹³:

Փաստարկման և վիճաբանության սերտ կապն ու միասնությունն, իհարկե, չի նշանակում նրանց նույնություն: Ավելին, իրականության մեջ միշտ չէ, որ այդ կապը գոյություն ունի: Փաստարկումը, որպես կշռադատության

⁶ Ch. Perelman. The New Rhetoric and The Humanities. Dordrecht, 1979. էջ 11:

⁷ Այդ հարցի և, ընդհանրապես, Պերելմանի փաստարկման տեսության քննադատական վերլուծությունը տե՛ս Ս. Ի. Агамян. Критический анализ современных буржуазных концепций философской аргументации. Ереван, 1987. գլուխ 2:

⁸ Փոքր-ինչ ավելի հեռու գնալով, հարկ է նկատել, որ մարդկային բանականության յուրաքանչյուր ակտ, լինի դա ապացուցում, փաստարկում թե կշռադատության մեկ այլ ձև, չի կարող պարփակված լինել միայն սեփական շրջանակներում, լինել ինքնատիպ: Մարդկային մտածողությանն ի սկզբանե բնորոշ է երկխոսության ձևը: Այն հասարակական միջավայրի և հասարակական հարաբերությունների արդյունք է, և ինչպես ցույց է տալիս փորձը, դրանցից դուրս մարդկային լեզվամտածողությունն անհնար է: Ահա այս առումով մարդկային մտածողության յուրաքանչյուր դրսևորում, գեներալորեն ենթադրելով մարդկային հանրության առկայություն, ունենալով իր սուբյեկտ ու օբյեկտը, անմիջականորեն կամ ենթագիտակցաբար ենթադրում է նաև որոշակի հասցեատեր:

⁹ Տե՛ս Գ. А. Брутян, Аргументация. էջ 25:

¹⁰ Գ. А. Брутян, Очерк теории аргументации. էջ 16:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² Տե՛ս А. П. Алексеев. Аргументация. Познание. Общение, էջ 3, 132.

¹³ Т. Коттарбински. Избранные произведения. М., 1963, с. 760:

եղանակ և մտքերի փոխանակության կազմակերպման նախընտրելի ձև, կարող է բնորոշ լինել կամ չլինել մտավոր հաղորդակցման գործընթացին (կամ նրա առանձին ձևերին՝ վեճ, զրույց, երկխոսություն, քննարկում և այլն): Ըստ այդմ էլ, մտավոր հաղորդակցումը կարող է կրել փաստարկողական կամ ոչ փաստարկողական բնույթ:

Եթե վիճաբանությունը դիտելու լինենք որպես մի ամբողջական համակարգ, ապա փաստարկողական բնույթ ունեցող վեճի շրջանակներում փաստարկումը հանդես կգա իբրև այդ ընդհանուր համակարգի կարևոր բաղադրատարր: Վեճի հասկացությունն ավելի լայն է ու ընդգրկուն, քան փաստարկման հասկացությունը: Փաստարկումը, լինելով վեճի (կամ մտավոր հաղորդակցման մեկ այլ ձևի), որպես ամբողջական համակարգի մի մասնիկը, հատվածը, իր վրա կրում է այդ համակարգի կնիքը և նրա բնորոշ առանձնահատկությունների դրոշմը: Հաճախ վեճին մասնակցող կողմերից մեկի փաստարկողական համակարգն ուսումնասիրելով պատկերացում ենք կազմում ամբողջ վեճի վերաբերյալ, վերականգնում առանձին դրվագներ: Այլ կերպ ասած, փաստարկումը յուրովի ներկայացնում, արտացոլում, հուշում է մտավոր հաղորդակցման այն ձևը (նաև բովանդակությունը), որի շրջանակներում կիրառվում է:

Թերևս, ավելորդ չէր լինի նաև անդրադառնալ փաստարկման և վիճաբանության որոշ յուրահատկությունների, ինչը թույլ կտար ավելի հստակեցնել և ընդլայնել պատկերացումները նրանց ընդհանուր գծերի ու տարբերությունների վերաբերյալ: Տեսական վերլուծությունների ընթացքում փաստարկումը, սովորաբար, դիտարկվում է «դոնոր-ռեցիպիենտային» մոդելի համանմանությամբ, որտեղ փաստարկողը հանդես է գալիս իբրև նախաձեռնող կողմ, նա ակտիվ է, իր գործողություններով ձգտում է «մշակման ենթարկել» լսարանը կամ կոնկրետ ռեցիպիենտին: Իսկ վերջինս հարաբերականորեն ավելի պասիվ է, նրա մասնակցությունը, ֆունկցիոնալ նշանակությունը փաստարկողական գործընթացում ունի որոշ իմաստով կրավորական բնույթ¹⁴: Մասնակից կողմերի միջև դերային նման տարանջատումն, իհարկե, ունի առավելապես ճանաչողական նշանակություն և կրում է պայմանական բնույթ: Իրականում ամեն ինչ ավելի բարդ է ու բազմակողմ. չկան «մաքուր» փաստարկողներ ու «մաքուր» ռեցիպիենտներ: Կենդանի զրույցի, երկխոսության և, մասնավորապես, վեճի ու վիճաբանության պարագայում փաստարկողի և ռեցիպիենտի դերերն ամրագրված չեն և արագորեն փոխվում են՝ հերթագայելով միմյանց: Կողմերից յուրաքանչյուրը տարբեր իրավիճակներում կարող է հանդես գալ մեկ որպես փաստարկող, մեկ որպես ռեցիպիենտ: Վիճաբանության մասնակիցներն ունեն հավասար իրավասություններ ու հնարավորություններ, իսկ նրանց ներկայացրած փաստարկողական և հակափաստարկողական համակարգերը դիտարկվում են իբրև հավասարազոր կառույցներ:

Մասնագիտական գրականության մեջ փաստարկումը, որպես կանոն, ներկայացվում է թեզիսի ապացուցմանը կամ հակաթեզիսի հերքմանն ուղղ-

¹⁴ Նման մտացումն, անշուշտ, պայմանակալ է, ունի զուտ հարաբերակալ բնույթ և չպետք է հիմքեր տա թերագնահատելու համար ռեցիպիենտի դերը: Վերջինս փաստարկման գործընթացում ցուցբան կարևոր է, ինչքան փաստարկողի դերը: Առանց հաացատիրոջ փաստարկումն ինքնին անհնարին է: Նկատի ունենալով ռեցիպիենտի դերի կարևորությունը փաստարկողական գործընթացում, Վ. Բրուկրիդին իրավացիորեն փաստարկումը դիտարկում է իբրև փաստարկողի և ռեցիպիենտի համատեղ գործունեություն, իսկ արանց համարում «համափաստարկողներ» (տե՛ս А. П. Алексеев, Аргументация. Познание. Общепение, էջ 69, 110):

ված հետևողական դատողությունների ու եզրահանգումների շղթայի կամ մենախոսությունների հաջորդականության տեսքով: Վեճը, սակայն, դժվար է հանգեցնել սոսկ հետևողականորեն իրարից բխող դատողությունների հաջորդականությանը: Թե տրամաբանական կառուցվածքի, թե ընթացակարգի տեսանկյունից այն ավելի բարդ ու դինամիկ, արտահայտչամիջոցների ու եղանակների տեսակետից ավելի ազատ գործընթաց է:

Բաղկացած լինելով մի շարք փաստարկողական համակարգերից՝ հաճախ էլ վիճաբանությունն իր մեջ ընդգրկում է այնպիսի կառույցներ, որոնց թեզիսները զգալիորեն տարբերվում են նրա ընդհանուր կամ «մեծ» թեզիսից: Դա բացատրվում է նրանով, որ մեծ թեզիսի ճշմարտության ապացուցումն ու հիմնավորումը հաճախ հնարավոր է լինում կառուցել, այսպես կոչված, օժանդակ (որպես նախադրյալներ հանդես եկող) դրույթների ապացուցման և հիմնավորման ճանապարհով:

Ի տարբերություն փաստարկման, որի առանցքը միշտ թեզիսն է, վիճաբանության առանցքը կամ կապող օղակը կարող է լինել նաև թեման: Որպես այդպիսի վիճաբանության օրինակ «Փաստարկում: Ճանաչողություն: Հաղորդակցում» գրքի հեղինակ Ա. Պ. Ալեքսեևը բերում է Պլատոնի «Խընջույթը»¹⁵: Այնտեղ փաստորեն բացակայում է միասնական թեզիսը, որի նկատմամբ մասնակիցները բաժանվեին հակադիր բանականների: Այդ բանավեճն իրենից ներկայացնում է միևնույն թեմային նվիրված մենախոսությունների ամբողջություն: Մենախոսություններն ունեն փաստարկողական բնույթ, ընդգրկում են մյուս մասնակիցների դրույթների ու փաստարկների գնահատականներ՝ շնայած դրանք շատ տեղ չեն զբաղեցնում¹⁶:

Գիտական կոնֆերանսների, քննարկումների ժամանակ կազմակերպվող վիճաբանություններն, օրինակ, իրենց տրամաբանական կառուցվածքով ավելի շատ նման են պլատոնյան «Խնջույթին», քան, ասենք, արհեստտեսիլյան դիալեկտիկական զրույցին: Այս վերջին տիպի վիճաբանություններն ավելի բնորոշ են և հաճախակի են կազմակերպվում գիտական նեղ շրջանակներում, համեմատաբար փոքրամասշտաբ քննարկումների ժամանակ, ասենք, լաբորատորիայի պատերի ներսում, սեմինար պարապմունքների ընթացքում և այլն:

Վիճաբանությունների նկատմամբ, որոնց կազմակերպող սկիզբը թեման է, չի կարելի տրամաբանական կառուցվածքին վերաբերող նույն պահանջները ներկայացնել, ինչ փաստարկողական համակարգերին և այն վիճաբանություններին, որոնց համար կազմակերպող սկիզբ է հանդիսանում թեզիսը: Միաժամանակ, ինչպես նշում է Ալեքսեևը, չի կարելի շնկատել, որ վիճաբանությունների վերջին տիպն ավելի հաճախ է խորհրդածությունների օբյեկտ դառնում, քան առաջինը¹⁷:

Արդեն նշվեց, որ փաստարկողական համակարգն իր վրա անխուսափելիորեն կրում է մտավոր հաղորդակցման այն ձևի կնիքը, որի շրջանակներում կիրառվում է: Որո՞նք են փաստարկման առանձնահատկությունները վիճաբանության ընթացքում: Վիճաբանության երևույթի ինչպիսի՞ գծեր են առավելապես պայմանավորում փաստարկողական համակարգի բնույթը: Վերջապես, ինչպիսի՞ն է փաստարկման ու վիճաբանության փոխհարաբերության դիալեկտիկական:

Նախ և առաջ պետք է նկատել, որ վիճաբանության ընթացքում սովոր-

¹⁵ Տե՛ս Ա. Պ. Алексеев, Аргументация. Полнание. Общение, էջ 135:

¹⁶ Տե՛ս Платон. Сочинения в трех томах, т. 2, М., 1970, էջ 95—157:

¹⁷ Տե՛ս Ա. Պ. Алексеев, նշվ. աշխ., էջ 135.

րաբար ուժեղանում և վառ արտահայտվում է փաստարկման հոետորական կողմը, շեշտը դրվում է պերճախոսության, խոսքի համոզականության ու զանազան հնարանքների վրա: Այստեղ փաստարկման ընթացքը մեծապես և անմիջականորեն կախված է հակառակորդի կամ ընդդիմախոսի պահվածքից, այն բանից, թե նա ինչպես կձևակերպի իր թեզիսը, ինչպիսի փաստարկներ ու հակափաստարկներ առաջ կքաշի: Փաստարկողական համակարգը նման դեպքերում դառնում է ավելի կոնկրետ, ավելի նպատակային ու առարկայական: Փաստարկողի խնդիրն է հերքել հակառակորդի կողմից առաջադրված կոնկրետ թեզիսն ու հակափաստարկները, այլ ոչ թե առավել «հնարավոր» հակաթեզիսների ու հակափաստարկների ամբողջ համակարգեր, ինչպես մեկ դերասանի թատրոնում:

Նշվեց նաև, որ վիճաբանությունը բարդ և բազմակողմ, արտահայտչամիջոցների ու եղանակների տեսակետից հարուստ ու ազատ դործընթաց է: Միայն տրամաբանական կառուցվածքը չի կարող սպառել նրա բովանդակությունը: Այնտեղ կարող են կարևոր նշանակություն ստանալ նաև վիճողների տրամադրությունները, հոգեվիճակը, դեմքի միմիկան, ռեպլիկաների ձևով արվող արտահայտությունները, լսարանի վարքագիծը և այլն: Դա, անշուշտ, յուրովի է անդրադառնում վեճի ժամանակ կիրառվող փաստարկողական համակարգերի բնութագրերի վրա: Խ. Պերելմանը նշում է, թե երբ «առաջ է գալիս վեճի, լսարանի վրա ներգործելու նպատակով դիսկուրսի օգտագործման հարցը, ապա անհնարին է հաշվի շառնել այն հոգեբանական և սոցիալական պայմանները, որոնց բացակայության դեպքում փաստարկումը կլիներ անբովանդակալից և անարդյունք»¹⁸:

Զնայած Պերելմանն իր փիլիսոփայական սկզբունքներին հավատարիմ, փաստարկումը դուրս բերելով ձևական-տրամաբանական մտածողության ոլորտից, այստեղ էլ փորձում է նրա լինելիության հարցն անմիջականորեն կախման մեջ դնել վեճին կամ լսարանի հետ աշխատելու գործընթացին բնորոշ սոցիալ-հոգեբանական պայմաններից՝ բացարձակացնելով ու գերազանահատելով նրանց նշանակությունը, այնուամենայնիվ, ռացիոնալն ու ակրնհայտն այն է, որ վեճի ընթացքում փաստարկողական համակարգերը ձեռք են բերում նոր որակներ ու բնութագրեր, որոնք այլ պայմաններում գուցե և մնային չբացահայտված կամ առհասարակ բացակային:

Վեճի կարևոր առանձնահատկություններից մեկը կապված է նրա մասնակիցների կազմի հետ, ինչը ևս անխուսափելիորեն իր կնիքն է դնում վեճի ժամանակ գործածվող փաստարկողական համակարգերի վրա: Հայտնի է, որ վեճը կարող է ունենալ ինչպես երկու, այնպես էլ երկուսից ավելի մասնակիցներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է առաջ քաշել քննարկվող հարցի վերաբերյալ իր կարծիքը, իր տեսակետը, սեփական թեզիսի ապացուցումն ու հիմնավորումը և մյուսների հերքումը պարունակող փաստարկողական իր համակարգը: Այդպիսի դեպքերում խաչվում, զուգորդվում, մրցակցության մեջ են դրվում երկուսից ավելի փաստարկողական կառույցներ: Դա բնականաբար հանգեցնում է վեճի ժամանակ կիրառվող առանձին փաստարկողական համակարգերի բարդացմանը, նրանց ընդլայնմանն ու հարստացմանը:

Զէ՞ որ ի տարբերություն վեճ-երկխոսության, բազմակողմ վեճի ժամանակ յուրաքանչյուր մասնակից պետք է հերքի արդեն ոչ թե մեկ, այլ մի քանի հակաթեզիսներ և ընդդիմախոսների կողմից առաջադրված հակափաստարկների մեկից ավելի համակարգեր:

¹⁸ Ch. Perelman, Olbrechts—Tyteca L., The New Rhetoric, A Treatise on Argumentation. Dordrecht—London, 1969. p. 14.

Բրեստցի հետազոտող Վ. Ա. Միխայլովը փաստարկման առանձնահատկությունները պայմանավորող գործոնների շարքում առանձնացնում է վիճաբանության կենտրոնական հարցի բնույթը, այն բնագավառը, որտեղ տեղի է ունենում վեճը (փիլիսոփայություն, իրավունք քաղաքականություն, բնագիտություն), տրամադրության տակ եղած ինֆորմացիայի բնույթը, վեճի մասնակիցների անհատական առանձնահատկությունները, նրանց թիվն ու սուբյեկտիվ հնարավորությունները, ազդեցության գերակշռող ձևերը, նըպատակին հասնելու համար գործադրվող միջոցների և վեճի գործընթացը կարգավորող հոգեբանական ու սոցիալական մեխանիզմների բնույթը և այլըն՝ թվով տասնմեկ գործոններ¹⁹։

Փաստարկման բնույթն անմիջականորեն կախված է նաև վիճաբանության նպատակից, որին հետամուտ են վիճող կողմերը²⁰։ Եթե վեճի նպատակը ճշմարտության հայտնաբերումն է կամ ճշմարիտ համարվող դրույթի հիմնավորվածության ստուգումը, ապա մասնակիցների փաստարկողական համակարգերը ոչ այնքան հակադրվում, որքան լրացնում են միմյանց։ Վիճաբանության այս ձևը Ս. Ի. Պովարնինը համարում է «ամենաբարձր, ամենավեհն ու ամենագեղեցիկը» բոլոր ձևերի մեջ, այն կարող է տեղի ունենալ կրթված, հավասարակշռված և մտավոր բարձր կարողությունների տեր մարդկանց շրջանում²¹։ Այդպիսի վիճաբանություններն ավելի շուտ նըման են պրոբլեմների համատեղ լուծման։ Նրանց շրջանակներում փաստարկողական կառույցները ստեղծվում են տրամաբանական, բարոյական ու հոգեբանական բոլոր կանոններին ու նորմերին համապատասխան։ Այստեղ գործ ունենք փաստարկման օրինակելի կամ իդեալական համակարգերի հետ։

Նման վիճաբանությունների հաճախ կարելի է հանդիպել մասնավորապես գիտության բնագավառում, տարբեր թեմաներով և հարցերի շուրջ կազմակերպված սեմինարների ու գիտաժողովների ժամանակ։ Գիտության պատմությունն էլ հարուստ է նման դրվագներով։ Հիշենք թեկուզ դանիացի ֆիզիկոս Նիլս Բորի և Ալբերտ էյնշտեյնի տևական վեճը Բորի անորոշության սկզբունքի շուրջ, որի ընթացքում, շնորհիվ կառուցողական և նպատակամետ բանավեճի, այն անընդհատ լրացվում և ճշգրտվում էր՝ ձեռք բերելով ավելի կուռ կառուցվածք։ Պատմությունը վկայում է, որ Հարաբերականության տեսության հիմնադրի նուրբ, բանիմաց դիտողություններն ու խորիմաստ քննադատությունը մեծապես նպաստեցին տրամաբանորեն ամբողջական ու կատարյալ ձև տալու քվանտային ֆիզիկայի կարևորագույն սկզբունքներից մեկին²²։

Այն դեպքում, երբ վիճաբանության նպատակը ունկնդիրներին համոզելը կամ գրավելն է, այսինքն՝ այն վեճ է, ինչպես Պովարնինը կասեր՝ «ունկնդիրների համար»²³, առաջին պլան է գալիս լսարանի գործոնը։ Վիճող կողմերը ձգտում են իրենց փաստարկողական կառույցները ստեղծելիս առավելագույնս հաշվի առնել ունկնդիրների մտավոր զարգացածության մակարդակը, աշխարհայացքային առանձնահատկությունները, նախասիրությունները, ճաշակը, ինչպես նաև նրանց շահերը։ Նրանք աշխատում են ընտրել

¹⁹ Տե՛ս В. А. Михайлов, О специфике аргументации в процессе научной дискуссии. В кн.: Философские проблемы аргументации. Ереван, 1986, էջ 75—76:

²⁰ Տե՛ս Բուլճ տեղը, էջ 71—72:

²¹ Տե՛ս С. И. Поварнин, Спор. О теории и практике спора.—«Вопросы философии», 1990, № 3, էջ 73:

²² Այդ մասին տե՛ս М. А. Слемнев, В. П. Васильков, Диалектика спора. Мянск, 1990, էջ 130—131:

²³ С. И. Поварнин, Спор. О теории и практике спора. էջ 70—71:

ներակներին հոգեհարազատ և հասկանալի փաստարկներ, որոնց գործածումը փաստարկողական կառույցներում մեկ այլ պարագայում գուցեև այնքան էլ արդարացիված չէր լինի: Շեշտը դրվում է հոգեբանական հնարքների և պերճախոսության վրա:

Այդպիսի վեճերի ցայտուն օրինակներ են քաղաքական կուսակցությունների ու խմբերի միջև տեղի ունեցող մերօրյա հրապարակային բանավեճերը, մամուլի էջերը ողողող փոխադարձ մեղադրանքները: Այստեղ գլխավոր նպատակը, որպես կանոն, ոչ թե հակառակորդ կողմին վերահամոզելն է, ոչ թե ճշմարտության փնտրտուքը, այլ զանգվածների աչքում հակառակորդին հեղինակազրկելը, նրան սևացնելը, և ընդհակառակը՝ սեփական նորանոր կողմնակիցներ հայթայթելն ու քաղաքական միավորներ կորզելը: Նման վեճերի ժամանակ դործի են դրվում շատուզված փաստեր ու մեղադրանքներ, արվում են լսարանին առավել հետաքրքրող ու նրան հուզող հայտարարություններ, կարևոր թիրախ է դառնում լսարանի զգացմունքային ոլորտը:

Հաճախ էլ հանդիպում են վիճաբանություններ, որոնց նպատակը ոչ թե ճշմարտության հայտնաբերումն է կամ նրա ստուգումը, ոչ թե ներկաներին համոզելն է, այլ ուղղակի հաղթելը՝ ինչ գնով էլ լինի: Այդպիսի վեճերի ժամանակ փաստարկողական համակարգերը հագեցված են լինում ամենատարբեր իմաստակուսություններով, անթույլատրելի հնարանքներով և վեր են ածվում փսևեղփաստարկման: Իսկ երբ վեճն անցնում է նաև էրիստիկականի ու սոփեստարանի սահմանը, երբ մեջտեղ են գալիս փոխադարձ հայհոյանքները, սպառնալիքն ու գոռգոռոցը՝ ի շիք է դառնում նաև փսևեղփաստարկումը: Նման պարագաներում ասում ենք, որ գործ ունենք հաղորդակցման և ազդեցության ոչ փաստարկողական ձևերի հետ²⁴:

Այսպիսով, իդեալական, կառուցողական բնույթի վիճաբանությունը, որն արիստոտելյան տերմինաբանությամբ ունի զուտ դիալեկտիկական ուղղվածություն և զերծ է սոփեստական, էրիստիկական տարրերից²⁵, ենթադրում է փաստարկման իդեալական համակարգեր, որոնք կառուցվում են իմացաբանական, տրամաբանական, հոգեբանական ու բարոյական բոլոր կանոնների համաձայն, փոխադարձ հարգանքի, կողմերի մտավոր, բարոյական ու իրավական հավասարության սկզբունքի հիման վրա²⁶:

Իր հերթին սոփեստական կամ էրիստիկական բնույթ ունեցող փսևեղփաճաբանությունը ենթադրում է փսևեղփաստարկում, փաստարկողական արատավոր կառուցվածքներ, որտեղ ակամա կամ միտումնավոր խախտվում են վեճի իմացաբանական, տրամաբանական, բարոյահոգեբանական կանոնները, գործի են դրվում զանազան «ոչ թույլատրելի» հնարքներ՝ թեզիսի նենգափոխում, փաստերի աղավաղում, հակառակորդին հոգեբանական հավասարակշռությունից հանելուն ուղղված հնարքներ, ծաղր, ներշնչանք, սուտ և այլն: Երբեմն էլ նման վեճերում, ինչպես արդեն նշվեց, բացակայում է անգամ փսևեղփաստարկումը, գործի են դրվում ազդեցության ոչ փաստարկո-

²⁴ Ազդեցության ոչ փաստարկողական ձևերի մասին տե՛ս А. П. Алексеев, Аргументация. Познавание. Общение. էջ 19—22:

²⁵ *Տե՛ս* Аристотель, Сочинения в 4-х томах. Т. 2. М., 1978, էջ 555:

²⁶ Վեճի և փաստարկման կանոններն ու օրենքները բավականին բազմազան են և բազմաբնույթ, դրանք վերաբերում են ինչպես կազմակերպման ու վարման արարողակարգին, այնպես էլ նրանց բարոյական, տրամաբանական, գեղագիտական, հոետորական ու հոգեբանական կողմերին: Դրանց մանրամասն կարելի է ծանոթանալ վեճի ու փաստարկման հարցերին նվիրված մասնագիտական գրականության մեջ:

ղական եղանակներ՝ սպառնալիքներ, հայհոյանք, հրաման, ֆիզիկական ազդեցությունն ու հարկադրանքի զանազան ձևեր:

Քննարկվող օրինաչափությունը, սակայն, պետք է մոտենալ որոշ վերապահումով: Միշտ չէ և ամեն մի փսեղովիճաբանություն չէ, որ կազմված է լինում փաստարկման արատավոր համակարգերից: Տրամաբանական տեսակետից անթերի, իդեալական փաստարկողական համակարգերի անհամապատասխան և ոչ ճիշտ համակցումը ևս կարող է հանգեցնել արատավոր վիճաբանության: Դա խոսում է վիճաբանության պրոցեսի կազմակերպման ցածր մակարդակի մասին: Այդպիսի վիճաբանություն օրինակ է Պովարնինի «ցրված» կամ «անձև» վիճաբանությունը, որին նա հակադրում է վեճի «կենտրոնացված» ձևը²⁷: Անձև վիճաբանությունն աչքի է ընկնում անհետևողականությամբ: Սկսվելով որևիցե դրույթի քննարկումով՝ այն վեր է ածվում որևէ առանձին փաստարկի կամ ինչ-որ մասնավոր մտքի համար մրդվող վեճի: Հետո կողմերը սկսում են վիճել մի երրորդ մտքի շուրջ: Եվ այդպես շարունակ: Հաճախ էլ պատահում է այնպես, որ վիճողները շեն կարողանում հիշել, թե ինչից սկսվեց վեճը²⁸: Եվ շնայած որ նման վիճաբանության տարբեր դրվագներ առանձին-առանձին կարող են տրամաբանական տեսակետից թվալ անթերի, նրանց ոչ ճիշտ համակցումն ու համադրումը ամենևին էլ չի կարող ունենալ կառուցողական և ճանաչողական բնույթ:

Սկսած հին աշխարհից մինչև մեր ժամանակները՝ փիլիսոփաները փորձել են զանազան ձևերով տարբերակել ու դասակարգել վեճի տեսակները: Առաջարկվել են դասակարգման տարբեր եղանակներ ու համակարգեր՝ ըստ ճանաչողական կողմնորոշման, տրամաբանական կառուցվածքի, նպատակի, մասնակիցների կազմի, նրանց ինտելեկտուալ, էթիկական դիրքորոշումների, էմոցիոնալ բնութագրերի և այլն²⁹:

Արդեն հայտնի եղանակների կողքին կարելի է առաջարկել ևս մեկը: Վեճերը կարելի է բաժանել փաստարկողական և ոչ փաստարկողական ձևերի: (Ըստ երևույթին, նման մոտեցումը որոշ վերապահումներով կիրառելի է նաև մտավոր հաղորդակցման և նրա մյուս ձևերի նկատմամբ): Իհարկե, ճանաչողական, բարոյական և հումանիստական նկատառումներով նախընտրելի են վեճի փաստարկողական ձևերը, քան անհիմն, ոչ փաստարկողական, փոխադարձ վիրավորանքների ու տուրուղմփոցի հասնող լեզվակոխիվները: Փաստարկողական վեճը միայն հաղորդակցման ակտ չէ, այն նաև ճանաչողական գործընթաց է³⁰: Այդպիսի վիճաբանության ընթացքում ոչ միայն հայտնաբերվում, հիմնավորվում և հրապարակվում է ճշմարիտ դրույթը, այլև քննադատաբար հերքվում և մերժվում են ոչ ճշմարիտ կամ թերի դրույթները, մասնակիցների փաստարկողական համակարգերում եղած թերություններն ու սխալները:

Ինչպես որ վիճաբանությունն իր այս կամ այն առանձնահատկություններով կանխորոշում է փաստարկման ձևերն ու եղանակները, նրա բովանդակությունը, փաստարկների համակարգը, այնպես էլ փաստարկումը մեծապես պայմանավորում է վեճի էությունը՝ հաղորդելով նրան ճանաչողա-

²⁷ ՏՆ՝ Ս. Н. Поварнин, Спор. О теории и практике спора, էջ 69:

²⁸ ՏՆ՝ Առյճ տեղը:

²⁹ ՏՆ՝ Аристотель, Сочинения в 4 томах. Т. 2. М., 1978, էջ 516, 555. С. Н. Поварнин, Спор. О теории и практике спора, էջ 65—76. М. А. Слемнев, В. Н. Васильков, Диалектика спора, էջ 17. А. Н. Соколов, Проблемы научной дискуссии. Логико-гносеологический анализ. Ленинград, 1980, էջ 50—84. А. В. Степов, Как победить в споре. О культуре полемики. Ленинград, 1991, էջ 4, 138—139, 159:

³⁰ ՏՆ՝ Г. А. Брутян, Очерк теории аргументации, էջ 18.

կան, բաժոյական ու գեղագիտական որոշակի որակներ: Այդպիսին է վիճարանության և փաստարկման դիալեկտիկան:

Պետք է նշել, սակայն, որ վիճարանության ընթացքում փաստարկման առանձնահատկությունները, վիճարանության և փաստարկման փոխհարաբերության հարցերի ուսումնասիրման տեսանկյուններն ալելի շատ են և այսքանով շեն սահմանափակվում: Այդ ուղղությամբ հետագա ուսումնասիրություններն ու հետազոտությունները հետաքրքրություն են ներկայացնում և կարող են արժեքավոր լինել ինչպես փաստարկման, այնպես էլ վեճի տեսության համար:

Օ. Օ. ОГАНЕСЯН — К вопросу о взаимоотношении понятий дискуссия и аргументация.— Между аргументацией и дискуссией есть родственная связь и переплетенность. Они существуют друг в друге и предполагают друг друга. С одной стороны, дискуссия складывается из аргументационных и оценивающих аргументацию монологов. С другой стороны, процесс аргументации, по существу, может рассматриваться как диалог, беседа, дискуссия в эксплицитной (когда оппонент присутствует) или имплицитной (когда оппонент только подразумевается) форме. Адресат, будь то существующая в действительности личность, воображаемый противник или второе «я», подразумевается во всех случаях.

Связь и единство аргументации и дискуссии, однако, не означает их идентичность и не претендует на универсальность. Аргументация, как способ рассуждения и предпочтительная форма организации обмена мнениями, может быть или не быть свойственной процессу умственной коммуникации или его отдельным видам: спор, беседа, диалог, прения и т. д.

Каждая область умственной коммуникации неизбежно оставляет свою печать на аргументационных системах. В ходе дискуссии обычно усиливается и ярко выражается ораторский компонент аргументации, делается акцент на красноречие, убедительность речи и на разнообразные приемы. Фактическое присутствие оппонента во время спора весьма способствует аргументативному процессу, придавая ему более предметный характер.

Характер аргументации непосредственно обусловлен принципами и механизмами, регулирующими процесс спора, преобладающими способами воздействия, личными особенностями участников, имеющейся в распоряжении информацией и т. д. Он в значительной мере зависит и от количества участников спора. Различаются аргументационные системы, применяющиеся во время спора — диалога и во время спора-полилога. Их характер в большей степени обусловлен также целями участников спора.

Как дискуссия теми или иными своими особенностями предопределяет виды и способы аргументации, систему аргументов, так и аргументация главным образом определяет сущность спора, придавая ему определенные познавательные, моральные и эстетические качества.